ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ N 416-Ա «09» 07. 2008

2008 թ. հուլիսի -------- N -----

# ԹԵՂՈՒՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՎԹԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու և հողամասեր տրամադրելու մասին» N 1278-Ն որոշման 19-րդ կետի 1-ին ենթակետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1/ Թեղուտի հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ տարածքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումների իրականացման ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2/ Թեղուտի հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ տարածքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

Նախարար՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության մշակույթի
նախարարի 2008թ. հուլիսի---04----ի N-226-Ա
հրամանի

ԾՐԱԳԻՐ

Թեղուտի հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ տարածքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն ու անվթարայնությունն ապահովող միջոցառումների իրականացման վերաբերյալ :

1. Սույն ծրագիրը ( այսուհետ՝ Ծրագիր) սահմանում է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի ( այսուհետ՝ Հայքավայր) շահագործման համար անհրաժեշտ տարածքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների ( այսուհետ՝ Հուշարձաններ) պահպանությունն ու անվթարայնությունն ապահովող միջոցառումների իրականացման կարգը:
2. Հուշարձանների պահպանությունն ու անվթարայնությունն ապահովող միջոցառումները իրականացվում են N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին ( այսուհետ՝ ժամանակացույց) համապատասխան:
3. ժամանակացույցին համապատասխան հուշարձանների պահպանությունն ու անվթարայնությունն ապահովող միջոցառումներն իրականացնող կազմակերպության ընտրությունն իրականացվում է հանքավայրի հանքային իրավունքը կրող ընկերությունը ( այսուհետ՝ Լիցենզառու) ՝ հաշվի առնելով , մասնավորապես համապատասխան ոլորտում փորձառությունը, տեխնիկական հագեցվածությունը, մասնագետներով ապահովվածությունը:
4. Լիցենզառուն ապահովում է հուշարձանների պահպանությունն ու անվթարայնությունն ապահովող միջոցառումներն իրականացնող կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքների համապատասխանությունը օրենսդրությանը:
5. Յուրաքանչյուր տարվա ավարտից հետո Լիցենզառուն ամփոփում է նախորդ տարվա ընթացքում սույն ժամանակացույցին համապատասխան հուշարձանների պահպանությունն ու անվթարայնությունն ապահովող միջոցառումներն կատարման արդյունքները և դրա վերաբերյալ տեղեկանքը տարվա ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում ուղարկում է ՀՀ մշակույթի նախարարություն:
6. Յուրաքանչյուր տարվա ընթացքում իրականացվող պատմության և մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունների ու պեղումների վերահսկողությունը կատարվում է պետական լիազորված մարմնի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության կողմից:
Կատարված աշխատանքների վերջնական արդյունքները ընդունում է պետական լիազորված մարմինը:
7. Սույն ծրագիրը և ժամանակացույցը կարող են փոփոխվել Լիցենզառուի ներկայացմամբ ՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի կողմից համապատասխան փոփոխությունների հաստատմամբ:

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության
և մշակույթի հուշարձանների պահպանության
գործակալության հուշարձանների ու պատմական
միջավայրի պահպանության և օգտագործման
բաժնի պետ՝ Ս. Շաքարյան

բաժնի գլխավոր մասնագետ՝ Կ. Բարսեղյան

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության մշակույթի
նախարարի 2008 թ. հուլիսի 04-ի N416-Ա հրամանի

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## Թեղուտի հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ տարածքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումների իրականացման

| N | N հուշարձ. համար | N հուշարձ. ենթահամար` | N ըստ պետ. ցուցակի | Հուշարձանի անվանումը | միջոցառումը | պահպ. գոտու մակերեսը | ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | 1. | | նորահայտ | Հոսանց գոմեր | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 0.8 հա | 2008 թ. 3-րդ եռամսյակ |
| 2. | 2. | | նորահայտ | Դամբարանադաշտ «Ղարաքոթուկ» | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 1.6 հա | 2008 թ. 3-րդ եռամսյակ |
| 3. | 3. | | նորահայտ | Ձնդաների միջնադարյան գերեզմանոց | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 0.2 հա | 2008 թ. 3-րդ եռամսյակ |
| 4. | 4. | | 5.88.6 | Բրագձորի հնավայր (գերեզմանոց) | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>գ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 0.95 հա | 2008 թ. 3-րդ եռամսյակ |
| 5. | 5. | | 5.37.5 | Եկեղեցի (Բարձրյալ խաչ) | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 7.9 հա | 2009 թ. 3-րդ եռամսյակ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6. | | 5.1. | 5.37.5.1 | գերեզմանոց<br>/12-17-րդ դդ./ | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | | |
| 7. | | 5.1.1. | 5.37.5.1.1 | խաչքար /12-րդ դ./ | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ տեղում կանգնեցում<br>գ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | | |
| 8. | | 5.1.2. | 5.37.5.1.2 | խաչքար /12-րդ դ./ | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ տեղում կանգնեցում<br>գ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | | |
| 9. | 6. | | նորահայտ | Ֆիրմայի բաղի<br>դամբարանադաշտ | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 1.3 հա | 2009 թ. 3-րդ եռամսյակ |
| 10. | 7. | | նորահայտ | Չորիգյուղի<br>գերեզմանոց,<br>սրբավայր | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 5.5 հա | 2010 թ. 3-րդ եռամսյակ |
| 11. | 8. | | 5.37.4 | Դամբարանադաշտ<br>«Փիչուտ» | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 4.0 հա | 2010 թ. 3-րդ եռամսյակ |
| 12. | 9. | | նորահայտ | «Դուքանածորի»<br>գերեզմանոց | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 0.6 հա | 2010 թ. 3-րդ եռամսյակ |
| 13. | 10. | | 5.88.12 | Գյուղատեղի<br>«Բովերի խեչ» | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>գ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | 7.9 հա | 2011 թ. 3-րդ եռամսյակ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 14. | | 10.1. | 5.88.12.1 | Գերեզմանոց /12-13-րդ դդ./ | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/ | | |
| 15. | | 10.2. | 5.88.12.2 | Գերեզմանոց /15-19-րդ դդ./ | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>դ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | | |
| 16. | | 10.3. | 5.88.12.3 | Եկեղեցի | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ չափագրում<br>դ/ պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>ե/ ամրակայում<br>զ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | | |
| 17. | | 10.4. | 5.88.12.4 | Մատուռ «Բովեր» /5-7-րդ դդ/ | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ չափագրություն<br>դ/ պեղումներ /չափագրման աշխատանքներ, լուսանկարում/<br>ե/ վերականգնում<br>զ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | | |
| 18. | | 10.4.1. | 5.88.12.4.1 | Խաչքար /12-14-րդ դդ./ | ա/ տեղազննում և հուշարձանի տարածքի սահմանների պարզաբանում<br>բ/ բուն հուշարձանի ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի կազմում<br>գ/ հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում | | |

Կազմեցին՝

ՀՀ մշակույթի նախարարության
աշխատակազմի պատմության և
մշակույթի հուշարձանների պահպանության
գործակալության հուշարձանների ու պատմական
միջավայրի պահպանության և օգտագործման բաժնի պետ՝ Ս. ՇԱՔԱՐՅԱՆ

Բաժնի գլխավոր մասնագետ՝ Կ. ԲԱՐՍԵՂՅԱՆ